



Շնորհավոր երկաթուղայինի օրը

2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ երկաթուղային

ՀԿԵ ՓԲԸ-ի թերթ
ՀՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ, 2020



Շնորհավոր երկաթուղայինի օրը:

Հարգելի գործընկերներ, երկաթուղայիններ, վետերաններ: Սրտանց շնորհավորում եմ ձեզ մեր տոնի՝ երկաթուղայինի օրվա կապակցությամբ:

Երկաթուղային տրանսպորտի ոլորտն այսօր հսկայական, հիանալի աշխարհ է, ավանդույթներով ու արժեքներով լի, դա ընտանիք է՝ ընդհանուր նպատակներով և ուղղություններով: Ձեր աշխատանքը պահանջված է և հանդիսանում է բարձր հուսալիության օրինակ, այն պատվաբեր է և հարգված: Երկաթուղային տրանսպորտի անխափան աշխատանքը տնտեսության կայունության և պետության պաշտպանունակության գրավական է:

Հարավկովկասյան երկաթուղին այսօր ակտիվորեն զարգացող, հաջող աշխատող ընկերու-

թուղիներում՝ նոր էլեկտրագնացներ՝ ուղևորների համար ապահովելով հարմարավետություն և ճանապարհորդության ժամանակի խնայողություն, ինչպես նաև արդյունավետ համագործակցություն հաստատել բիզնեսի ներկայացուցիչների, Հայաստանի կառավարության հետ:

ՀԿԵ-ի բոլոր ծրագրերի և նվաճումների հիմքում է մեծ, պատասխանատու և ամուր կոլեկտիվի յուրաքանչյուր աշխատողի ներդրումը: Ձեր ամենօրյա աշխատանքի շնորհիվ ուղևորների անվտանգ փոխադրումը և բեռների ժամանակին առաքումը դարձել են ժամանակակից կյանքի սովորական հատկանիշներ: Սրտանց մաղթում եմ մեր ոլորտին կայուն, հաստատուն զարգացում, մեր ձեռնարկու-

թյուններին՝ բարգավաճում, իսկ ձեզ՝ ֆիզիկական, հոգեբանական, էմոցիոնալ և ֆինանսական բարեկեցություն:

Ես կցանկանայի առանձնացնել մեր վետերաններին: Մեզ համար դուք ոչ միայն փորձառու ավագ ընկերներ եք, այլ նաև օրինակ մեր երիտասարդության համար, տոկոսություն և մասնագիտությանը հավատարմության օրինակ: Ձեր կյանքը երկաթուղուն նվիրած մարդկանց, շնորհիվ է Հայաստանի համար կարևորագույն տրանսպորտային համակարգը գործել էր հանրապետության համար դժվար տարիներին, զարգանում է այժմ: Ձեզանից շատերը դարձան երկաթուղային դինաստիաների հիմնադիրներ, որոնք մինչ օրս աշխատում են ի շահ Հայաստանի երկաթուղու:

Հարգելի գործընկերներ և վետերաններ:

Իմ անկեղծ շնորհակալությունն եմ հայտնում բարեխիղճ աշխատանքի, պատասխանատվության և նվիրվածության համար, սրտանց մաղթում եմ ձեզ երկաթյա ուժ նոր նվաճումների համար, անիվների ձայնի նման վստահ շարժ դեպի ձեր նպատակները, գնացքի պատուհանից երևող բնապատկերների նման վառ և տարատեսակ տպավորություններ, հաջողություն լայնածավալ նախագծերում:

Շնորհավորում եմ, սիրելի՛ գործընկերներ: Խաղաղություն և բարեկեցություն ձեզ:

«ՀԿԵ» ՓԲԸ գլխավոր տնօրեն
Ա.Վ.Մելնիկով

Բացառիկ մասնագիտություն

Հարավկովկասյան երկաթուղում աշխատում են մի քանի տասնյակ մասնագիտությունների տեր մարդիկ: Ադմինիստրատիվ աշխատակիցներ, գծի տնտեսության աշխատողներ, մեքենավարներ, փականագործներ, խառատներ, վագոնային տնտեսության մասնագետներ, էներգետիկներ: Սակայն մեր շրջանում աշխատում են նաև բացառիկ մասնագիտություններ ունեցող մարդիկ: Օրինակ՝ դարբինագործությամբ երկաթուղում զբաղվում է միայն մեկ մարդ: Այլևս ոչ ոք չի կատարում Սանահինի մեխանիզացված գծի ուղեմատում աշխատող Արամ Ղարաբաղյանի աշխատանքը:



«Այսօր բարձրորակ քարտե ածուխ գտնելը հեշտ չէ, ստիպված ենք աշխատել մեր ունեցածի հետ», - դժգոհում է վարպետ Արամը՝ փորձելով ավելացնել վառարանի ջերմությունը, որտեղ կրակից վարդագույն է դառնում ռելսի կտորը: - Մեր տեղականը բարձրորակ չէ, խառնված է հողի ու մանր կտորների հետ: Այսօր ռուսական ածուխ հնարավոր չէ գտնել»:

Փոքր արտադրամասում տեղադրված են դարբնոցային հաստոցը, գործասեղանը և մետաղահալոցը: Այստեղ դեռ շատ շոգ չէ, բայց ամառվա տապին կլինի ոչ այդքան համարավետ:

Ղարաբաղյանը Հարավկովկասյան երկաթուղում աշխատում է 2015 թվականից, մինչ այդ աշխատել էր Ալավերդու պղնձաձուլարանում: «Երբ

Նրանք պարզևատրվեցին

Մեր մեծ կոլեկտիվի յուրաքանչյուր ներկայացուցիչը թիմում, թե ինդիվիդուալ կերպով, շարունակում է կատարել իր ամենօրյա պարտականությունները: Համավարակի այս դժվարին շրջանում Հարավկովկասյան երկաթուղու անձնակազմն ապացուցեց իր աշխատանքի արդյունավետությունը՝ բեռներն ու ուղևորները շարունակում էին տեղափոխվել սովորական ռեժիմով՝ ճիշտ ժամանակին: Այնուամենայնիվ, վերջին ամիսներին մեր աշխատողներն աչքի են ընկել իրենց պարտականությունների կատարման հարցում ուշադիր և կարեկցող վերաբերմունքով: Որոշ աշխատակիցները ընկերության գլխավոր տնօրենի հրամանով նյութական պարգևատրումներ են ստացել:

Մասնավորապես, մայիսի 16-ին՝ 1202 գնացքի վագոնների գնմության ընթացքում ցուցաբերած ուշադրության և զգոնության, տեխնիկական խափանումը բացահայտելու և հնարավոր հետևանքները կանխելու համար պարգևատրվել են Գյումրի տեխնիկական կետի վագոնների 5-րդ կարգի ավագ գնող-վերանորոգողներ Դավիթ Սագրադյանն ու Վաղինակ Գրիգորյանը:

Սովետական-էջմիածին հատվածում հունիսի 3-ին տեղի ունեցած ջերմաքարչի հրդեհից հետո 6503 ճՄ-3 ջերմաքարչի էլեկտրական սխեմաների

Շարունակությունը 2-րդ էջ

Շարունակությունը 3-րդ էջ



Երկաթուղին հասարակության աջակցության կարիքն ունի

Ամեն օր գծի տնտեսության հարյուրավոր աշխատողները դուրս են գալիս Այրումից Վանաձոր, Գյումրիից Երևան, Երասխից Եղվարդ, Սևանից Զոդ տանող երկաթուղային գծեր: Երկաթուղային ենթակառուցվածքն ամենօրյա ուղադրության կարիք ունի, այստեղ խիստ կանոններ են գործում, կյանքի սեփական ռիսկով, սեփական կանոնակարգերը և չգրված կանոնները, որոնց իրականացումը հնարավորություն է տալիս ամեն օր տեղափոխել հազարավոր տոննա բեռներ և հազարավոր մարդիկ: Չնայած այսօր Հայաստանում երկաթուղին գործում է իր հզորության միայն մեկ տասներորդի չափով չորս արտաքին ելքերից երեքի շրջափակման պատճառով, երկրի տնտեսության որոշ ոլորտները մեծապես կախված են «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության արդյունավետ գործունեությունից:

Խորհրդային ժամանակներից Հայաստանը ժառանգել է երկաթուղային գծերի հարյուրավոր կիլոմետրեր, ինժեներական կառույցներ, որոնք ժամանակին ապահովում էին հանրապետության զարգացած արդյունաբերությունը: Դեպի Թուրքիա, Իրան և Ադրբեջան հաղորդակցության ստեղծումը իր հերթին նույնպես նպաստեց Հայաստանի երկաթուղով բեռնափոխադրումների ծավալների կտրուկ կրճատմանը: Սակայն ենթակառուցվածքը, որի նպատակն էր այսօրվա փոխադրումների ծավալները տասն անգամ գերազանցող ծավալների սպասարկումը, շարունակում է պատշաճ վերաբերմունք պահանջել: Այս կարիքը ծագում է ոչ միայն Հայաստանի տնտեսության ներկայիս պահանջներից, այլև ապագային է ուղղված, երբ տարածաշրջանային քաղաքական իրավիճակը խոչընդոտից կվերածի

նպաստող հանգամանքին: Ի վերջո, եթե կա ճանապարհ (բառի լայն իմաստով), ապա մի օր այն միանշանակ պահանջված կլինի: Հետևաբար, այսօր մեր առջև կանգնած է երկաթուղային ենթակառուցվածքի պահպանումը՝ տնտեսական և ֆինանսական նպատակահարմարության նախաշեմին:

Ենթակառուցվածքի այս կամ այն օբյեկտների պահպանման կամ երկրի շրջափակման պայմաններում երկաթուղու զարգացման վերաբերյալ հասարակության մեջ կան տարբեր կարծիքներ: Բայց տնտեսությունը թելադրում է իր սեփականը. բեռների հոսքերի և երկրի քաղաքացիների վճարողունակության սահմանափակ լինելը համապատասխան առաջարկ են ձևավորում նաև հաղորդակցության ոլորտում: Կարևոր չէ՞ դա երկաթուղի է, թե ավտոճանապարհներ, խողովակաշարեր, թե օդային տրանսպորտ: Հայաստանի նման փոքր երկրների համար տրանսպորտը տնտեսությունը սպասարկող ոլորտ է: Աշխարհագրական առումով մեծ տնտեսական տարածքներում, ընդհակառակը, տրանսպորտի զարգացումը որոշակի չափով խթանում է տնտեսությունը:

Այնուամենայնիվ, մեր երկրի երկաթուղիների հետաձգված պահանջարկը կամ ներուժը բավականին նշանակալի է: Հարավորությունների և ներուժի պահպանմանը պետք է ուղղված լինեն մեր այսօրվա ջանքերը: Մինչդեռ երկաթուղու դերի նվազումը մեր կյանքում (վստահ եմ, որ դա ժամանակավոր երևույթ է) փոխում է հասարակության վերաբերմունքը դրա նկատմամբ: Մեր համաքաղաքացիների համար սովորական պրակտիկա է դարձել երկաթուղու տարածքում աղբ թափել, երկաթուղու անվտանգ շահագործման համար նախատեսված տարածքներ զավթելն ու կառուցապատելը: Եվ հատկապես Երևանին հարող տարածքներում: Տարեկան ընկերությունը տասնյակ տոննա կենցաղային և շինարարական թափոններ է հեռացնում իր վերահսկողության տակ գտնվող տարածքներից:

Յուրահատուկ տեղ է զբաղեցնում քաղաքացիների կողմից անօրինական անցումներ կազմակեր-

պելու խնդիրը, ինչը երկաթուղում տեխնիկական խնդիրներ է առաջացնում, իսկ անվտանգության կանոնների պահպանման մասին ընդհանրապես խոսք չի գնում: Միևնույն ժամանակ, քաղաքացիները լիովին անտեսում են համապատասխան օրենսդրությունը, որը պատասխանատվություն է նախատեսում նման գործողությունների համար: Անասունների անկառավարվող արածեցումը իրոք հեշտացնում է գյուղացիների կյանքը, սակայն նյութական կորուստների է վերածվում, ինչպես նրանց, այնպես էլ երկաթուղային օպերատորի համար: Չնայած պետական մարմինների հետ համատեղ ձեռնակվող երկաթուղայինների բոլոր ջանքերին, խնդիրը դեռևս չի լուծվում: Գիշերվա ընթացքում մաքրված տարածքներում կրկին կույտեր են աճում, գծերի վրա ավտոտրանսպորտ է հայտնվում, առավոտյան անասունները դուրս են գալիս արդեն ծանոթ ճանապարհ, երկաթուղային գծերի տակ անցկացվում են ջրային կոմունիկացիաներ և էլեկտրական մալուխներ: Նման ինքնագործունեությունը կարող է շարժակազմի գծերից դուրս գալու պատճառ դառնալ, ինչը հղի է քաղաքացիների առողջության և կյանքի համար ռիսկով: Միևնույն ժամանակ, օրենքը կոպիտ խախտող քաղաքացիները ընկերությանը հաճախ սպառնում են դատական գործընթացներով: Նույնիսկ անհեթեթության է հասնում. ՀԿԵ-ից պահանջում են հեռացնել կոնտակտային ցանցի հենասյունը, որը կախարդական փայտիկի շարժումով կարծես հանկարծ հայտնվեց մասնավոր հողի վրա:

Երկաթուղին և մեր հասարակությունը հաղորակցվում են մի հարթության մեջ, և շատ հաճախ դրանք ընդհանուր խնդիրներ ունեն: Ի վերջո, աղբը թափվում է ոչ միայն գծերի մոտակայքում, անպատասխանատու վարորդները խնդիրներ են ստեղծում ոչ միայն երկաթուղային անցումներում, ապօրինի շինություններն այսօր չեն հայտնվել և խանգարում են ոչ միայն երկաթուղու բնականոն գործունեությանը: Այստեղ անհրաժեշտ է ևս մեկ անգամ շեշտել, որ երկաթուղային ամբողջ ենթակառուցվածքը՝ այն հողի հետ, որի վրա գտնվում է, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության, այլ ոչ թե «ՀԿԵ» ընկերության սեփականությունը: Ընկերությունը ժամանակավորապես կառավարում է այս գույքը և, համագործակցելով պետական գերատեսչությունների հետ, կանխելու է իր դեմ ապօրինի գործողություններ ձեռնարկելու փորձերը:

Այս պայմաններում մեր երկաթուղու ներկայիս ներուժի պահպանումը պետք է դիտարկել կառավարող ընկերության, հասարակության, պետության և տեղական իշխանությունների փոխգործակցության մեջ:

120 տարի առաջ Հայաստանում կառուցված այս ենթակառուցվածքը եղել է, կա և պետք է խնամքով պահպանվի, իսկ դրա նշանակությունն ու ներուժը ամբողջությամբ ընկալված լինի մեր կողմից: Իրոք, չնայած պատմության որոշակի ժամանակահատվածներում տարբեր քաղաքական, սոցիալական և այլ պայմանների, երկաթուղին միշտ ծառայել է և կշարունակի ծառայել մեր հասարակության շահերին:

Ռուբեն Գրղելյան

1-ին էջ

Բացառիկ մասնագիտություն

Ես 1984-ին գորացրվեցի, եկա գործարան՝ որպես խառատի օգնական աշխատելու: Սակայն պարզվեց, որ բոլոր թափուր աշխատատեղերն արդեն լրացված են, կար միայն դարբնի հաստիք: Ու այդպես էլ սկսեցի տիրապետել այդ մասնագիտությանը», - հիշում է մեր գրուցակիցը:

Նրա հիմնական գործը՝ գծի տնտեսության աշխատողների համար գործիքներ պատրաստելն է: Մուրճեր են, երկու տեսակի մանեկադարձիչներ, լինգեր, քլունգներ: Ռելսերի մետաղն ամենամուրն է, և դարբնի պատրաստված գործիքները ծառայում են ավելի երկար, քան պատրաստի, գործարանայինները: Դարբնին ասում է, որ գործիքները նրա մոտ վերադառնում են միայն սրելու համար, դրանց ամրությունն էրբեք քննադատության առարկա չի դարձել: Գործիքներից բացի, վարպետը պատրաստում է նաև սարքավորումների ոչ ստանդարտ պահեստամասեր, վերանորոգում է վնասված և կոտրված մասերը շարժակազմի և սարքավորումների վերանորոգման համար: Բայց դրանով դարբնի ստեղծագործական հնա-

րավորությունները չեն սահմանափակվում:

«Աղմուկիստրացիայի խնդրանքով պատրաստում էի ծաղկամաններ, նստարաններ, առաստաղներ: Շատ բան կարելի է պատրաստել, այս աշխատանքը բոլորովին էլ ճանճրալի չէ, ինչպես կարող է թվալ, ստեղծագործելու շատ հնարավորություններ կան», - կիսվում է Ղարազյոզյանը:

Դարբնի գործը նա սկսեց սովորեցնել նաև իր որդուն, ով իր փոքրիկ արտադրամասում այժմ վաճառքի համար արտադրանք է պատրաստում: «Մա նուրբ և այսօր շատ պահանջված արհեստ է, և այդ ինտերնետներով ապրանքների վաճառքը շատ ավելի հեշտ է դարձել: Երիտասարդներն ավելի ճկուն են, նրանք ավելի շատ գաղափարներ ունեն», - ասում է վարպետ Արամը:

Դարբնի մասնագիտությունը Հարավկովկասյան երկաթուղում կարևոր և անհրաժեշտ է, ինչպես և տասնյակ այլ մասնագիտությունները: Բայց այստեղ ստեղծագործելու հնարավորությունները շատ ավելի շատ են, չէ որ դա երկաթուղու միակ աշխատատեղն է, որտեղ երկաթը ոչ թե ամուր մետաղ է, այլ նոր բան ստեղծելու համար նախատեսված փափուկ նյութ:



Երկաթուղային տոհմեր



Երկաթուղայիններին մանկուց եմ ճանաչել: Մեծացել եմ Լենինականում՝ գնացքների ճակի ձայնը ականջներումս: Սիրելի մարդիկ էին, հարգված, պատվով, որը բարեկամ էր, որը ծանոթ ու հարևան, ու բոլորը ի բնե, ի ծնե երկաթուղու մարդիկ: Երկաթուղային է՝ ասում էին նրանց մասին, ու այդ մի բառը բավական էր նրանց բնութագրելու համար, այդ մի բառի մեջ նկարագիր կար, հարգանք ու մեծարանք կար:

Շատ տարիներ անց լրագրողական ճակատագիրն ինձ մոտեցրեց նրանց: Մանկությանս զբաղողությունները համոզմունք դարձան: Ճանաչեցի ու ստեղծագործական ներշնչանքս մեծագույն սիրով նվիրեցի երկաթուղուն փառաբանված, երկաթուղուն շունչ տված մարդկանց՝ նրանց կյանքն ու գործը լուսաբանելով իրենց իսկ թերթում: Էլ ավելի հասկացա, որ երկաթուղայինը ուրիշ մարդ է, երկաթուղու ու իր պատվի տերը, այդ պատվի արժեքով ապրող մարդ: Որ դա պապից պապ, որդուց որդի փոխանցվող մասնագիտություն է, որ երկաթուղին սեր է, ուրիշ սեր, որ մագնիսի գորություն ունի ու ձգում-տանում է սերնդեսերունդ: Որի հետ էլ գրուցես, մի երկու բառից հետո երևում են արմատները, որոնք, է՛, տոհմի խորքերից են գալիս:

Մեր հերթական հերոսը՝ Հովհաննես Չարչյանը, նույնպես բացառություն չէ. Չարչյանները տոհմիկ երկաթուղայիններ են: Երվանդ պապից սկսենք՝ երկաթուղու օբյեկտների պահակ է եղել: Հայրը՝ Ազատ Չարչյանը, յոթ տարի բանակում ծառայելուց, ապա և Հայրենական պատերազմից հետո աշխատել է որպես գնացք կազմող: Երկաթուղային էր և մայրը, վերջին տարիներին կայարանում բեռներ ընդունող-հանձնող էր: Երկաթուղուն աշխատել է նաև կինը: Երկաթուղային էր, Լենինի շքանշանակակիր Հայկ հորեղբայրը: 60 տարի անընդմեջ երկաթուղուն ծառայել է Աղաբեկ հորեղբայրը՝ Արաքս կայարանի շտաբ կետային կայարանապետը: Այստեղ աշխատում է և նրա որդի Միսակը: Շուտով երկաթուղային գերդաստանը կհամալրվի նոր անդամով՝ Հովհաննեսի Ազատ որդին այս տարի ավարտում է Գյումրու երկաթուղու քոլեջի երթևեկության բաժինը:

Գերդաստանի «ամենաերկաթուղայինը» Հովհաննես Չարչյանն է: Եվ գիտե՞ք ինչու. կայարանում է ծնվել՝ հենց կայարանի շենքում: Ապրում էին շենքի առաջին հարկում: Հետաքրքրասեր երեխա էր, յոթ տարեկանից «Մահմանապահների պատանի ընկեր» խմբակի անդամ էր: Պարզևստիկ էր՝ «Մահմանների գերագնաց պահպանության համար» Գերագույն խորհրդի մեդալով, ինչպես նաև սահմանապահ գործերի ղեկավարության կողմից՝ 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի մեդալներով: Տարված է եղել նաև ֆուտբոլով, խաղացել «Կաշվե գնդակ»

մանկապատանեկան թիմում, որը 1970-ին նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Չարչյանի կյանքն ու գործունեությունն աշխատասիրության փայլուն օրինակ է: Դեռ դպրոցական տարիներից գծի բանվոր էր՝ տարեկիցների հետ փայտյա կոճեր

Պատվավոր երկաթուղայինը

էին փոխում: Յուրօրինակ է անցել և նրա բանակային ծառայությունը՝ երկրի հյուսիսում, Բարենցի ծովի ափին, Կոլա թերակղզում, խիստ կլիմայի (9 ամիս ձմեռ, 3 ամիս խառը, տարվա կեսը գիշեր, մյուս կեսը ցերեկ) պայմաններում՝ աշխղեկի պարտականությամբ ու պատասխանատվությամբ մասնակցելով ստումային ստորջրյա սուզանավերի բազայի կառուցմանը: «Դժվար էր» հարցի պատասխանը հակիրճ էր ու իմաստալի՝ «ծառայություն էր»: Կյանքում ինչ էլ արեց, արեց պատասխանատվությամբ: Նպատակալաց պատանին սկզբում որոշել էր շինարար դառնալ: Դպրոցն էլ, շինարարական տեխնիկումն էլ գերազանցությամբ ավարտեց: Բայց չէ, ինչպես գյումրեցին կասեր ինձը կեղևի, բա տոհմական-պապականը: Այդպես էլ եղավ՝ գների հուշումով թեքվեց դեպի երկաթուղին: Բելգորոդի շինանյութի տեխնոլոգիական ինստիտուտում հեռակայելը նրա համար բավարար չէր: Այժմ էլ ուսումը շարունակեց Ռոստովի երկաթուղային ինստիտուտում, փոխադրումների կարգավորողի մասնագիտությամբ: «Դարձ ի շրջանս յուր»-ը իրագործված էր: Թեև մինչ այդ էլ երկաթուղուն էր եղել, եղբոր՝ կապի և ազդանշանների մեխանիկ Շալիկո Չարչյանի օգնականը, որպես երկաթուղային, մկրտվել նրա ձեռքի տակ: 1985-ից ի վեր Հովհաննես Չարչյանն Անի կայարանի կայարանապետն է: Չարչյան ազգանունն էլ կարծես ճիշտ իր բնույթի ու տեսակի մասին է խոսում: Չարչյանները աշխատող, չարչարվող մարդիկ են, չարչարանքից չվախեցող ու դրա արդյունքով գոհացող մարդիկ: Մրցանակ կհասնի նրան, ով կասի, որ Չարչյան Հովհաննեսը գեթ մեկ օր բացակայել է աշխատանքից, որ գեթ մեկ օր նա հիվանդ, թե առողջ, դորշակը ձեռքին, ճիշտ ժամին չի կանգնել կատանատույցում ու ընդունել եկող-գնացող գնացքները: «Կայարանն իմ տունն է, - ասում է, - ավելի շատ այստեղ եմ լինում, քան տանը»:

Մարդը սովոր է այդպես աշխատել՝ ապահովել երկաթուղու բոլոր ծառայությունների անխափան աշխատանքը, իրեն վստահված գործը կատարել բարձր պատասխանատվությամբ: Երկաթուղին պատվով աշխատանքի է արժանի: Պատվով աշխատանքն էլ պատվով գնահատականի՝ Հովհաննես Չարչյանին շնորհվել է երկաթուղու ամենաբարձր ու ամենապատվավոր կոչումը՝ «Պատվավոր երկաթուղային»: Տպավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ալեքսեյ Մելնիկովի վերաբերմունքով առ աշխատանքն ու աշխատակիցները: Ասում է՝ գիտի լսել շարքային երկաթուղայինին, փորձում է ընդգրկել նախկին աշխատողներին՝ նրանց փորձն ու հմտությունները, ինչպես նաև աշխատանքային կարգապահությունն ու կարգուկանոնը կարևորելով:

Տասնամյակներ է անցկացրել Չարչյանը կայարանապետի պոստում ու բազում փորձություններ: Թե ինչպիսի ծանրաբեռնվածությամբ են աշխատել երկրաշարժին հաջորդած առաջին օրերին ու տարիներին, իրենց ու Աստծուն է հայտնի: Ամեն օր 50 և ավելի, տոն օրերին մինչև 100 վագոն բեռ էին բարձրում ու բեռնաթափում: Դրվատանքի արժանի է Անի կայարանի ողջ աշխատակազմի անձնագոհ աշխատանքը, որը հայրենասիրության ու մարդասիրության վառ ապացույց է: Պատահել է, մի հերթափոխի ընթացքում գործն արել են 2-3 հոգով՝ գիշերն ու ցերեկը մեկ արած, տոն ու ընտանիք մոռացած՝

փոխարինելով իրենց լենինականցի աղետյալ գործընկերներին: Նման մարդասիրական պահվածքի համար կայարանի աշխատակազմը ԽՍՀՄ երկաթուղային տրանսպորտի նախարար Գենադի Ֆադեևի, ապա և Անդրեյկաթուղու Հայաստանի մասնաճյուղի պետ Յուլյա Դանդուխյանի կողմից արժանացավ դրամական պարգևի: Եվս մի արժանահիշատակ դրվագ. մինչև 2010 թվականը Անիի քիմիկոսությունը գրկված էր խմելու ջրից, և վագոն-ցիստեռներով Լենինականից ջուր էին բերում: Լենինականի կայարանապետ Վսահան Գասպարյանի ականջը կանչի, բարձրան աշխատանքները կազմակերպվում էին նրա գլխավորությամբ: Ջուրը ժողովրդին հասցնելու տերն էլ Չարչյանն էր: Դժվար գործ էր, բայց երկուստեք գիտակցում էին դրա կենսական նշանակությունն ու, առանց չնչին վարձատրության անգամ, անտրտունջ հոգում էին բնակչության այդ կարևորագույն կարիքը: Պատասխանատվության ու հայրենասիրության մի դրվագ էլ հիշատակենք:

Եղավ մի շրջան՝ 1993-1996 թվականները, երբ, ինչպես Չարչյանն ինքն է պատմում, երկաթուղուն ամենաթողություն էր, և համակարգը մեծ կորուստներ կրեց, մինչդեռ Անի կայարանից մի ծեղ անգամ չպակասեց: Պահպանեցին, տեր կանգնեցին, ինչպես սեփական ունեցվածքին: Կայարանապետի գլխավորությամբ հանրային ունեցվածքի նկատմամբ հոգատար ու աջակցող եղավ ողջ անձնակազմը, և դրա շնորհիվ էր, որ բոլոր սարքերն ու սարքավորումները մնացին իրենց տեղում և շարունակեցին անխափան գործել: «Անի կայարանը ոչ մի օր գնացքների երթևեկության խափանում չունեցավ», - հպարտորեն ասում է Հովհաննես Չարչյանը: Եվս մի հայրենասիրական ձեռնարկ՝ օժանդակություն Արցախյան հերոսամարտին, որին մասնակցել է եղբայրը Շալիկոն: Եղբայրների նախաձեռնությամբ և Անի կայարանի բնակչության ակտիվ մասնակցությամբ ինքնաթիռով 15 տոննա սնունդ հասցրեցին Արցախ: Մինչև այսօր էլ պահպանում է բեռն ստացողի՝ Ստեփանակերտի տրիկոտաժի ֆաբրիկայի տնօրեն Լևոն Քոչարյանի շնորհակալական նամակը:

Իր գերդաստանի պես ներկայանալի է նաև նրա սեփական ընտանիքը՝ բնակավայրում հարգված ու օրինակելի: Վեց երեխա է մեծացրել տոհմիկ երկաթուղայինը: Որն արդեն ընտանիքատեր է, որն էլ՝ դեռ ուսանող: Կատակում է՝ «Մտքիս կար երեխաներիս թիվը տասի հասցնել, երկիրը խառնվեց»: Հիաստործը յոթ թոռներն են լրացնում: Նրանց մեջ էլ հաստատ կլինեն պապերի հետքերով գնացողները, ու լավագույն ավանդույթները կշարունակվեն:

Շեն կենաք, Չարչյաններ:
Մասնանսա Մարտիրոսյան

1-ին էջ

Նրանց պարգևատրվեցին

վերականգնման օպերատիվ և որակյալ մոնտաժային աշխատանքներ կատարելու համար խրախուսվել է Գյումրիի լոկոմոտիվային դեպոյի Երևանի տեղամասի մասնաբաժնի աշխատանքների ջերմաքարշի մեքենավար Ալբերտ Մանուկյանը:

Հուլիսի 7-ին 1207 գնացքի վագոնների զննության ընթացքում ցուցաբերած ուշադրության և զգուշության, տեխնիկական խափանումը բացահայտելու և հնարավոր հետևանքները կանխելու համար պարգևատրվել են Գյումրի տեխնիկական կետի 5-րդ կարգի վագոնների ավագ զննող-վերանորոգող Դավիթ Մազարայանն ու 4-րդ կարգի զննող-վերանորոգող Դավիթ Դավթյանը:

Հուլիսի 22-ին Երևան-Գյումրիի հատվածում 2702 գնացքի անվտանգ ու անթերի ընթացքն ապահովելու համար պարգևատրվել են Գյումրիի լոկոմոտիվային դեպոյի Գյումրիի տեղամասի բեռնատար և մարդատար գնացքների էլեկտրաքարշերի մեքենավար Արմեն Դազարյանն ու մեքենավարի օգնական Արթուր Եղիազարյանը:

Իսկ հուլիսի 22-ին 2702 գնացքի ժամանման և մեկնման ընթացքում աշխատանքային բանակցությունների կանոնակարգը հստակ կատարելու համար պարգևատրվել է «Գյումրի» ԳԿՄ Դավարիկ կայարանի հերթապահ Վարազդատ Ավետիսյանը:

Շնորհակալություն բարեխիղճ աշխատանքի համար:



Գնացքներ վարելը երկաթուղում թերևս ամենապատասխանատու մասնագիտություններից մեկն է: Մեքենավարներ, օգնականներ, հրահանգիչներ: Ուղևորներին կամ բեռները ժամանակին և անվտանգ նպատակակետին հասցնելուց բացի նրանք իրենց խցիկի բարձրությունից տեսնում են երկաթուղու ողջ ենթակառուցվածքը:

Երկաթուղային գծեր, կոնտակտային ցանց, լուսային ազդանշանային համակարգի աշխատանք այս ամենը նախնառաջ նկատում են մեքենավարները: Եվ այս առումով, մեքենավարների Նկատողությունների գիրքը երկաթուղում երթևեկության



Ոչ թե «համերաշխություն», այլ մասնակցություն երթևեկության անվտանգության ապահովմանը

անվտանգության վերահսկողության կարևորագույն տարրերից մեկն է: Նկատողությունները թույլ են տալիս բացահայտել ենթակառուցվածի «նեղ» տեղերը, կանխել հնարավոր միջադեպեր:

ՀԿԵ ղեկավարության որոշման համաձայն, «գնացքների երթևեկության անվտանգությունն ապահովելու համար, զգոն լինելու և նկատողություններ բացահայտելու համար» մեքենավարները խրախուսվելու են: Մայիսին առաջիններից պարգևատրվեց Երևանի ուղեմասի բեռնատար և ուղևորատար էլեկտրաքարշերի մեքենավար Վահագն Հարեյանը, ով միշտ այդ հարցում առանձնանում էր բարձր պատասխանատվությամբ:

Մեքենավար Սիմոն Ֆիլյան. «Մեքենավարների նկատողությունների գիրքը ուղեմասի կամ դեպոյի դեմքն է, իսկ վերահսկիչների համար՝ արժեքավոր տեղեկատվության աղբյուր: Մեքենավարների նկատողությունները օգնում են կանխել այս կամ այն միջադեպը, իրադարձությունը, գումար և ժամանակ խնայել, եթե նկատողությունը ժամանակին վերացվի: Սակայն, մյուս կողմից, գծի տնտեսության աշխատողները, էներգետիկները, դեպոյի աշխատակիցները զգայուն են նկատողություններ ստանալու տեսանկյունից: Եվ նրանց կարելի է հասկանալ, քանի որ ամեն դեպքում, ցանկացած անսպառնալիք կամ շեղման համար պատասխանատվությունն ընկնում է նրանց վրա: Օրինակ՝ էլեկտրաքարշ ընդունելիս ես խնդիր եմ նկատում ինչ-որ մասում: Եթե ես նկատողություն գրեմ, ապա բանվորը նկատողություն կստանա, իսկ նա չունի անհրաժեշտ պահեստամասեր: Բայց նկատողություն կստատա նա, այլ ոչ թե մեկ ուրիշը: Այսինքն՝ նախքան նկատողություն գրելը, մի քանի անգամ կմտածես:

Շարքային բանվորը շղթայի թույլ օղակն է: Ես պիտի վերլուծեմ յուրաքանչյուր կոնկրետ դեպքը և ինքս էլ հասկանամ, որքանով արդար կլինի պատիժը այս կամ այն պատասխանատու աշխատողի համար, եթե ես գրեմ այդ նկատողությունը: Դեպքե-

րի ճշտող մեծամասնությունում այն մարդը, ով, ըստ կանոնակարգի, պիտի ենթարկվի պատասխանատվությանը, մեղավոր չէ: Հետևաբար, շատերը նկատողություններ չեն գրում:

Որպես ելք այդ իրավիճակից ես տեսնում եմ այն, որ նկատողությունները պիտի ուղղված լինեն ոչ միայն այս կամ այն իրավիճակում մեղավորներին պատժելուն, այլև համակարգային խնդիրների և դրանք լուծելու ուղիների բացահայտմանը: Պատասխանատվությունը պետք է կրեն ոչ միայն բանվորները, այլև նրանց ղեկավարները:

Իսկ այսպես է մեկնաբանում ակտիվություն ցուցաբերող մեքենավարներին խրախուսելու ղեկավարության որոշումը ՀԿԵ-ի Ուսումնական կենտրոնի ղեկավար, նախկինում մեքենավար Արմեն Թամիրյանը. «Մեքենավարները երկաթուղու աչքերն ու ականջներն են: Նրանք ուշադիր հետևում են ուղիներին և ցերեկը, և գիշերը, և, հետևաբար, նրանց նկատողությունները արդյունավետորեն լրացնում են գծի տնտեսության աշխատողների, էներգետիկների, վերահսկիչների աշխատանքը: Ցավոք, ոչ բոլոր մեքենավարներն են դա լիովին հասկանում: Եվ գործընկերների հետ կեղծ համերաշխության զգացողության պատճառով որոշ մեքենավարներ նկատողություններ չեն գրում: Բայց սա ոչ թե «մատուցություն» է, այլ թիմային աշխատանք, որն ապահովում է երթևեկության, սարքավորումների, բեռների, ուղևորների և մեքենավարների անձնական անվտանգությունը: Ի վերջո, մեքենավարների դիտողությունները թույլ են տալիս գծային տնտեսության աշխատողներին, էներգետիկներին, ազդանշանային համակարգի, դեպոյների աշխատողներին կատարել իրենց աշխատանքը ավելի արդյունավետ և լիարժեք, ինչն իր հերթին թույլ է տալիս կանխել անցանկալի շատ հետևանքներ: Այս առումով լուրջ աշխատանք է տարվում լոկոմոտիվային բրիգադների մտածելակերպը փոխելու համար: Ենթակառուցվածի թերություններին աչք փակելը, մինչդեռ

երկաթուղին ծանրաբեռնված աշխատող կենդանի համակարգ է, նշանակում է նպաստել միջադեպերի, դժբախտ պատահարների, և, Աստված մի արասցե, անդառնալի կորուստների:

Կցանկանայի ևս մեկ առանձնահատկությունը ուշադրությունը հրավիրել: Որպեսզի համակարգը պարզապես ստանալու ինքնանպատակ չդառնա, անհրաժեշտ է ճիշտ տարբերակել մեքենավարների նկատողությունները՝ ըստ դրանց վերացման կարևորությանը: Մեքենավարը կարող է տարեկան միայն մեկ նկատողություն կատարել, սակայն դրա վերացման արդյունքում հնարավոր է կանխել լուրջ միջադեպեր: Եվ հնարավոր միջադեպի ծանրությունը գնահատելիս լուրջ դեր պետք է ստանձնի վերահսկիչների ապարատը, քանի որ այս դեպքում անհրաժեշտ է երկաթուղային մի շարք մասնագիտություններում համապարփակ գիտելիքներ ունենալ»:

ՀԿԵ-ում գործում է մեքենավարների նկատողությունների քննության արդյունքներով աշխատողներին պատասխանատվության ենթարկելու մասին արգելքը: Մեքենավարների նկատողությունների արդյունքներով կարգապահական կամ այլ տույժեր չեն կիրառվում: Ընկերության ղեկավարության տեսակետն այն է, որ մեքենավարները պետք է խրախուսվեն ձեռնարկություններին օգնություն ցուցաբերելու համար, այլ ոչ թե պատասխանատուները պատժվեն:

Մենք հեռու ենք այն մտքից, որ Մեքենավարների նկատողությունների գիրքը և դրա պատշաճ լրացումը ինչ-որ հրաշալի կերպով միանգամից կլուծեն երկաթուղու բոլոր խնդիրները: Այնուամենայնիվ, բաց թողնել ենթակառուցվածքում «նեղ» տեղերի և շարժակազմի հետ խնդիրների բացահայտման այս արդյունավետ և տարիների ընթացքում փորձարկված գործիքը անխոհեմ կլինեն: Երկաթուղու ղեկավարությունը լոկոմոտիվային բրիգադներին կոչ է անում կիրառել անձնական և ընդհանուր անվտանգության խնդիրների հսկողության այդ մեխանիզմը:



Սրտանց շնորհավորում ենք երկաթուղայինի օրվա կապակցությամբ

կի, բարձր գնահատեց երկաթուղու աշխատողների անձնուրաց աշխատանքը, շատերը բարձր պարգևների և խրախուսանքի արժանացան, ստացան դասական կոչումներ, ինչի կապակցությամբ սրտանց շնորհավորում են:

Կցանկանայի նշել, որ մեր Ընկերությունում մեծ ուշադրություն է դարձվում սոցիալական խնդիրների լուծմանը: Երկարատև քննարկումներից հետո ընդունվեց և հուլիսի 1-ից ուժի մեջ էր մտել «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ աշխատողների պարգևատրումների մասին նոր կանոնակարգը, որն էապես տարբերվում է նախորդ փաստաթղթից: Մեր գնահատմամբ, սա հավասարակշռված փաստաթուղթ է, որը հնարավորինս հաշվի է առնում մեր աշխատակիցների իրավունքներն ու շահերը:

Ձեռնարկված մի շարք միջոցառումների շնորհիվ Ընկերության տնտեսություններում աշխատանքային անվտանգ պայմանների ստեղծմանը, արտադրության մշակույթի և էթիկայի մակարդակի բարձրացմանը, սոցիալական նշանակության օբյեկտների պայմանների բարելավմանն ուղղ-

ված մեծ աշխատանք է տարվում:

Անցյալ տարվա վերջից առ այսօր կառուցվածքային ստորաբաժանումներին տրամադրվել է 880 միավոր կահույք և 35 միավոր կենցաղային տեխնիկա: Աշխատանքներն այս ուղղությամբ շարունակվում են:

Օգտվելով հնարավորությունից՝ երկաթուղու Արևմտյան և անձամբ իմ անունից անկեղծորեն և սրտանց շնորհավորում եմ մեր Ընկերության բոլոր աշխատակիցներին իրենց մասնագիտական տունի՝ Երկաթուղայինի օրվա կապակցությամբ, բոլորին մաղթում մասնագիտական հաջողություններ և նորանոր նվաճումներ դժվար և պատասխանատու աշխատանքում, քաջառողջություն, մեր Ընկերությանը՝ տնտեսական զարգացում և խաղաղ երկինք մեր Հայրենիքին և ամբողջ աշխարհին:

Արևմտյան նախագահ Ա.Ս. Մարտիրոսյան

Հարգելի երկաթուղայիններ: Հայկական երկաթուղու գործունեության պատմության մեջ ոլորտի աշխատողները, խորապես գիտակցելով իրենց կարևոր և նշանակալի դերը մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մեջ, իրենց բարեխիղճ աշխատանքի շնորհիվ միշտ եղել են մասնագիտական կոչման բարձրունքին: Ուրախությամբ կցանկանայի նշել, որ այսօր մեր Ընկերության աշխատողները, ունենալով սերունդների փորձ, հավատարիմ մնալով իրենց մասնագիտական կոչմանը, իրենց տունը նշում են բարձր արտադրական ցուցանիշներով և մեծ նվաճումներով: Ընկերության ղեկավարությունը՝ ըստ վաստա-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՂԱՅԻՆ
ՀԿԵ ՓԲԸ-ի
կորպորատիվ թերթ

Խմբագրության հասցեն
ԳՅ, Երևան, Տիգրան Մեծի պող. 50
Ֆեռ: +374 10 57 50 02
Էլ. փոստ՝ pr@railway.am, ukzhpressoffice@inbox.ru
Լուսանկարները՝ Գաղության Նազարյանի

Խմբագրական խորհուրդ
Գամարի պատասխանատու
Ռուբեն Գրծեյան

Օձակվել է 2 տպագրական մամուլ
Ստորագրված է տպագրության՝ 28.07.2020
Տպարանակը՝ 1000 օրինակ
Տպագրված է «Կոլավո» ՄԴԿ իրատարակչությունում



Локомотив
вашего
бизнеса

www.ukzhd.am

#2 (67)

С Днем
железнодорожника!

2020

Железнодорожник АРМЕНИИ

Газета
ЗАО ЮКЖД
ИЮНЬ-АВГУСТ,
2020 г.



Поздравляю с Днем железнодорожника!

Уважаемые коллеги, железнодорожники, ветераны! Искренне поздравляю Вас с нашим праздником – Днем железнодорожника.

Сегодня отрасль железнодорожного транспорта – это огромный, удивительный мир, насыщенный традициями и ценностями, это семья с едиными целями и направлениями. Ваш труд по-прежнему остается востребованным и является примером высокой надежности, он – почитен и уважаем. Бесперебойная работа железнодорожного транспорта – гарантия стабильности экономики и обороноспособности государства.

Сегодня Южно-Кавказская железная дорога

задействовать на маршрутах новые электропоезда, обеспечив комфорт для пассажиров и экономии времени в пути, а также наладить продуктивное сотрудничество с представителями бизнеса, правительством Армении.

За результатами всех программ и достижений ЮКЖД стоит вклад каждого из работников большого, ответственного и сплоченного коллектива. Благодаря Вашей ежедневной работе, безопасные перевозки пассажиров и своевременная доставка грузов стали привычными атрибутами современной жизни. Искренне желаю нашей отрасли неуклонного, стабильного развития, нашим

– активно развивающаяся, успешно работающая компания, успевшая за 12 лет своей работы реализовать множество важных инфраструктурных проектов, восстановить и запустить ключевые железнодорожные депо, вокзалы и станции, объекты электрификации и энергоснабжения, связи и сигнализации, реформировать комплекс пассажирских перевозок,

предприятиям – процветания, а Вам – физического, душевного, эмоционального и финансового благополучия!

